

ԴԵՊԻ ԱՆԻ *)

Որպէս մի գեղանի ու վշտահար այրի, որ այնքան ծանր կորուսաներից յետոյ, իր վերջին դառն խօսքը գեռ չի ասել երկնքին, կանգնան է նա, այն Մայր եկեղեցին, մենաւորութեան մէջ հոյակապ, իր աւերածով՝ աղէտաւոր, կանգնած է հէնց Ախուրեանի ափին և լալիս է նրա հետ դաբերի ցաւը։ Փշուած քարերի բեկորներով շրջափակուած մի փոքրիկ բակ ունի, ուր լեռնային խոտեր ու թփեր բուսել են ու իրար գտալարուել վայրի քմահաճոյքով։ Ամեն տարի գարնանը նրանք բ սրձրանում են, և աշնանը թոշնում ու դեղնում և իրանց չոր ցօղունները դէմ տալիս զիշերային հովերին աւերակների յաւլստենական երգի համար։ Եւ շրջապատի համատարած ամայութեան, աւերածի վհատեցուցիչ պատկերի հետ Մայր եկեղեցու համեմատաբար շէն արտաքինը մի հակապատկեր է ներկայացնում էլ աւելի ուժգին դարձնում կորուստի զգացմունքը։ Մի անկիւնը խոշոր փլուածք ունի, գմբէթ չի երևում, գաւիթը վաղուց խորտակուել է, բայց և այնպէս այս բարձրաբերձ, յլկուած ու նուրբ պատերը իրանց զարդանկարներով, լուսամուտներով, կտրի շուրջը եզերող սիրուն երիզներով վանում են աւերածի խեղղող խոհերը և շէն ու հոյակապ յիշատակարանի պարարիչ պատրանքը տալիս այցելուին։

Ներս եմ մտնում։ համատարած մերկութիւն ու լքում, արտաքինը խարսխափիկ էր, ներսը վհատեցուցիչ։ Խոնաւ, տեղտեղ քարուքանդ ու մամուապատ սալայատակի վրայ քայլում եմ և իմ ոտների արձագանքը երկար ու ձիգ ոլորներով կըրկնուում է բարձր կամարների տակ։ Սեփական շարժումով առաջ բերած այդ աղմուկը ճնշում է ինձ։ և միենոյն ժամանակ այնտեղ, գերեւում սկսում է մի ուժգին թրպուտոց։ նայում եմ, խայտաբղէտ աղանիների մի ահազին երամ է այն, որ խրտնած՝ մարդու ներկայութիւնից, իրար անցաւ։ նրանք շրջաններ

են կատարում իմ գլխից վեր, սիւների շուրջը, սեղանի վրայ-
ումանք դուրս են ընկնում լուսամուտներից, անկիւնի լայն բա-
ցուածքից, և միւները վերստին հանգչում պատերի դուրս ցը-
ցուած մասերի վրայ: Վերստին քայլում եմ առաջ, վերստին
ունաճայնիս արձագանքները կրկնում են հազար ու մի ուրբ-
ներով առանց վախեցնելու աղաւնիներին: Մնում է քամին...
նա խաղում է այստեղ ազատօքէն, նա տէր է այստեղ, փչում
է որտեղից ուղղում է և ինչպէս կամենում է. պտոյտներ է գոր-
ծում պատերի տակ, անկիւններում, կամարների տակ, լուսա-
մուտների մէջ և մանաւանդ արեմտեան կողմի լայն փլուածքի
շուրջը:

Մայր սեղանի ճակատի լուսամուտից վաղորդեան շողքե-
րը խուրձերով ներս են ընկել և խաղում են մամուապատ ու
խոնաւ յատակի վրայ: Անյոյս ու մոայլ ծալքերով դողպողում
է քամու դէմ սեղանի առաջը փոռուած այս սև կտորը, որ այն-
պէս յիշեցնում է դագաղի ծածկոյթը: Մի հատիկ հնամաշ ժա-
մագիրք կայ կաշուէ կազմով, որի վերին երեսը ցցուել է վեր
և նայում է աստուածածնի պատկերին բողոքող շեշտով: Բժըշ-
կութեան մի աւետարան կայ, որ յենուած է եղել մոմակալի
պատուանդանին, բայց ընկել է երեխ քամու երեսից: Հաստ մո-
մակալի մէջ երկու խոշոր մոմեր կան, որոնցից մէկը գալա-
րուել է և անյոյս ձևով կախուել է դէպի վար, կարծիս նայում
է յատակին, իսկ միւսը թերուել և մօտ է վայր ընկնելու:

Եւ այս բոլորից վեր, բոլորի վրայ անփակ աչքով հակում
են երկու աստուածածիններ, մէկը վէմ քարի բարձրութիւնից,
իսկ միւսը սեղանի առջեռում: Երկու գունատ, լալիան աստուա-
ծածիններ, անտաղանդ գործեր, մի ողբալի արուեստագէտի,
որ ունեցել է սակայն մի հատիկ ներշնչում: լալիան դարձնել
այդ սրբերին: Եւ նրանք լալիս են, բայց ոչ սրբի, այլ մուրա-
ցիլի, լքուած ու քաղցած մուրացիկի արցունքներով: Զոյգ
քոյրեր լինին կարծես, որոնք չգիտես ի՞նչու դատապարտուած
են այս պատ մթնոլորտի, այս խեղգող ամայութեան մէջ սպալ
անվերջ: Նրանցից իւրաքանչիւրը իր գրկում մի մանուկ ունի.
աստուածային երեխաններ, որոնք զարմանքով են նայում և ի-
րանց մօր արցունքին, և շըշապատի ամայութեանը: Գրքեր,
վարագոյր, ծածկոյթ, նոյն իսկ աստուածամայրերն իրենց գրկի-
մանուկով՝ ողջ դողդողում են քամու առաջ, որ թափանցում է
ամեն տեղ, լիզում է բոլորը, պրապում է բոլոր անկիւնները
ուղաղութեամբ, ասես իմանալու համար, թէ հինաւուրց այս
սրբավայրը, այս դարերի նահատակը չի ծածկել մի թանկապին
զարդ իր հին օրերի ճոխութիւնից: Ո՛չ, նա ոչինչ չի ծածկել,

աւերուած է, կողոպտուած ու սրբազնուած: Յաճախ լսել էի, թէ Անիի Մայր եկեղեցին տակաւին շէն է: Վհատեցուցիչ է ասել, որ նա նոյնքան շէն է, որքան կենդանի կարող է համամարուել մեծ ճանապարհին աւազակների ձեռքն ընկած ճամբորդը, կողոպտուած, մահացու կերպով խոցուած սրերով և լքուած: Եւ մանաւանդ լքուած...

Մեր սև պայմանները երր պիտի թոյլ տան բարձրացնել հայ ժողովրդի գիտակցութիւնը և կարողութիւնը, որ նա ցանկութիւն և պարտը զգայ փրկել ազգային յիշատակարանները վերջնական աւերածից:

Ի՞նչեր են անցել դարձել այս հոյակապ շէնքի գլխով. ով գիտէ, բայց մի բան հաստատ է, որ ժամանակից շատ աւելի, այստեղ աւերած են գործել մարդկային ձեռները: Մայր սեղանի պատի վտանգաւոր բացուածքից դուրս, թւում է թէ մնացած բոլորը բարուքանդ են արել բարբարոս մարդիկ: Տեղտեղ ահազին աշխատանք է թափուել մի զարդ ցած բերելու պատերի վերին մասերից: ուրիշ տեղ պարզապէս փշրել են լոկ աւերմոնքի հաճոյքով առաջնորդուած: Մուրճերով մաս-մաս խորտակուած սիւներ, պատուանդաններ կան, որոնց անկարելի է նայել առանց խորին ափսոսանքի, ինչպէս և առանց խորին գարշանքի դէպի մարդ արարածը:

Մայր գմբէթը չկայ. նրա տեղ մնացել է մի ահազին շրջանածե բացուածք: Թւում է թէ մի նզովուած օր, երբ ներսում բարբարոսները կրծոտում, փշրում, անարգում էին սըրբութիւնները, այս հինաւուրց տաճարը զայրոյթի և ցաւի մի գերազոյն ճիզով դէն է շպրտել իր կատարի ծածկոյթը, որպէսի երկինքը տեսնի, թէ ներքեւում ինչպէս է անարգում ամեն մի վեհ ու վսեմ բան:

Եւ երկինքը նայել է այն ցաւոտ օրում, և շարունակում է նայել բարձունքից: Գիշակեր թռչուններն իրանց հզօր թռիչքով գալիս են և բարանում եթերի մէջ, կտուցները կախ և շեղ ու սրատես նայուածքով փնտոում են անզոյշ աղաւնիներ այս բացուածքի շրթունքին, ապա նետուում են որսի վրայ. նրանց հզօր թևերի թրպրտոցը և զո՞րի ճիշը մի վայրկիան աղմկում է ամայի ու լքուած շէնքը: Ամպերն են գալիս շարան-շարան իրանց խոնաւ աչքերը պլշած. քաշ են ընկնում, և նայում են աւերակ տաճարի ներսը, և յետոյ՝ ասես հասկանալով պատկերի բոլոր ցաւոտ խորհուրդը, հինաւուրց շէնքի վիշտը, ցնցում են իրանց գլուխները, և հողմերի թևերի վրայ գնում են՝ մեռնելու անհունութեան մէջ:

Զարմանալի է, որ գլխատուած տաճարի այս ահազին
Օգոստոս, 1905.

բացուածքը բնաւ չի խախտում շէնքի ամբողջութեան ներդաշնակութիւնը։ Դէպի վեր ձգուող եկեղեցին այդ երկնածև բացուածքով միացել է երկնքի հետ կարծես մի ճարտարապետական խաչով, ինչպէս Հռոմի պանթէօնը Նայում եմ այս տաճարի հարուստ և ուղղաձիգ գծերով բազմանկիւնի սիւներին, այս խոցուածքու ու չանգործած սրտերին, այս թեթև կամարներին, որոնք եղբայրների պէս պահում են իրանց ուսին քարէ զանդուածք մի ժատում համերաշխութեամբ, և հիացմոնքի ու հպարտութեան մի անխառն գտացմունք լցնում է իմ սիրտը։ Ճարտարապետական այս հոյակապ կազմուածքի մէջ իմ առջև կանգնած է ինքը հայ ժողովուրդը, ես տեսնում եմ այստեղ գեղեցիկն ու վսիմը ըմբռնելու նրա առանձնայատուկ կարողութիւնը, անհունը և անյայտը պարփակելու նրա այս գողտը լիկ ու թեթև ճիզզը, գերբնականին հաղորդակից լինելու այս մեղմ ու անուշ ձևը, ևս տեսնում եմ իմ ցեղի ողին, որ միշտ այնպէս անխառն մնաց չորացնող միստիցիզմի, խեղդող դոդմայի մահաբեր ցանցերից։ Ամեն ինչ պարզ է այստեղ ու յստակ, որպէս մանկան հոգի ոչինչ զանդուածային, ոչինչ ու խոլական ու ճընշող, որից մարդու էութիւնը փշրում է, կամքը ընկճուում և ազատ մտածողութեան թափը խորտակւում։ Պատերը նուրը ու թեթև սլանում են վեր ծիծավկոտ ու անհոգ, բարակ սիւները, որոնք իրանց կատարներին կրում են ամբողջի ծանրութիւնը, տանջանքի, յախտենական ճիզզի զգացմունք չեն յարուցանում նայողի սրտում, այլ լոկ գեղարուեստական հաճոյք։ Նրանք չեն տնքում, չեն լուլիս ահագին բեռի տակ, որպէս դատապարտուածներ, այլ ժատում են իրար, պարող մանուկների պէս։ Հապա կամարները, այս թեթև կերպով անկիւնաւոր կիսուշը այնպէս են կախուած վերևում, ինչպէս սաղարթներից հիւտուած լինին, թեթև ու սիրուն։ Անգամ տներն ու լուսամուտները, որոնք ըստ սովորութեան թէն, նեղ են, բայց դարձեալ այնպէս չեն ճնշում, ինչպէս այն եկեղեցիներում, որոնց պատերը չափազանց լայն են և յիշեցնում են հին, բարաշէն բանտեր։ Եւ աշխարհում քիչ չեն եկեղեցիներ, որոնց կամարների զանգուածային ծանրութիւնը, սիւների բրտութիւնը, պատերի հաստութիւնը, մթնոլորդում իշխող մշտառե ու գաղջխաւարը, մարդու ակամայ մտածել են առաջի բանտի մասին։ Կոյր ու կրօնամոլ եռանդը միշտ աշխատել է հոգին ընկճել խաւարի ու ճնշող խորհրդաւորութեան բեռի տակ, ինչպէս որ աշխարհիկ բռնակարութիւնը նոյնն է արել մարդկային մարմնի վերաբերմամբ։ Եւ որչափ անողոք, ոչնչացնող ու խեղդող է մի եկեղեցի, նոյնքան նեղսիրտ, բռնակալ, աններողամիտ ու մոլի պիտի լինի նրան ստեղծագործող ողին։ Թռղ ասեն ինչ

ուզում են մասնագէտները, բայց ինձ համար Անիի Մայր եկեղեցին զուտ հայկական ոճ ունի, հայ եկեղեցու ոգու մարմնացումն է, այն ոգու, որին երբէք ծանօթ չեղան կրօնական հաւածանքները, որ չիմացաւ երբէք, թէ ի՞նչ են նշանակում խարոյիները և ի՞նքը հանդիսացաւ յաւիտենական մարտիրոս:

Հայկական ճարտարապետութեան մասին խօսելիս, ընդունուած է ասել, որ մենք աղջային անխառն արուեստ չունենք, որ հայկական յիշատակարանների ոճը մի խառնուրդ է արարականի և բիւզանդականի: Եւ այս կարծիքը թւում է տրամարանական, ի նկատի ունենալով մի շարք պատմական հանգամանքներ և յատկապէս մեր ինքնուրոյն, ազատ կեանքի կարճատեև շրջանները համեմատելով օտարների յաճախակի տիրապետութեան հետ: Ճշմարիտ է, որ հայ ցեղը շնորհիւ յիշուած ձախորդ պայմանների անկարող եղաւ իր հոգեոր կեանքի բոլոր արտայայտութիւններին տալ այն ինքնուրոյն կատարելութիւնները, որոնք այնպէս ընորոշում են ցեղերը և ցեղական հանճարները: Բայց անկասկած է, որ նոյնը չի կարելի ասել նրա եկեղեցական կազմակերպութեան մասին: Քիչ անգամ մի եկեղեցի կարող է աւելի աղջային լինել, իսկական արտայայտութիւն մի ժողովրդի հոգեոր կարողութեան՝ քան եղաւ հայկական եկեղեցին: արդ՝ երբ մի ազգ իր հոգեոր կեանքի այդ աստիճանի յատակ, կատարեալ արտայայտութիւնն ունի, անընական, նոյն իսկ անմիտ է ենթադրել, թէ նա չի ունենայ նրա առարկայական նիւթական արտայայտութիւնը: Ճարտարապետութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իւրաքանչիւր ցեղի հոգում իշխող ձևերի և պատկերների աստրկայացումը, գեղեցկութեան գաղափարների մարմնացումը: Հայ ժողովուրդը միշտ ունեցաւ կրօնական իր առանձնայատուկ հասկացողութիւնը, իր եկեղեցական ձևը, տարբեր՝ ըստոր միւս եկեղեցիներից թէ ըստ արտաքինի և թէ ըստ ներքինի, և ահա նոյն այդ ոգին է, որ նա այդպէս մարմնացրել է Անիի Մայր եկեղեց: ոյ մէջ: Թեթև խառնուրդը այս դէպքում ոչինչ չի խլում հայկական եկեղեցական ճարտարապետութեան աղջայնութիւնից: Առ հասարակ անխառն ոճ ոչ մի ազգ չունի: Գաղափարների և արուեստների էվլիւցիան կատարում է ոչ միայն սերնդից սերունդ, անհատից՝ անհատ, այլ և ցեղից՝ ցեղ, հորիզոնից՝ հորիզոն: Կատարեալ անհատականութիւնը ֆիզիքական և հոգեոր աշխարհում մի անկարելութիւն է, էակների և գաղափարների կապը տարածութեան ու ժամանակի մէջ որքան աննկատելի է, նոյնքան բացայայտ է և անհուն:

Ա. Ահարոննեան